

ՄԱՅՐ ԱԹՈՌԻ ԵՎ ՆԵՐՔԻՆ ԹԵՄԵՐԻ ԵԿԵՂԵՑԱԿԱՆՆԵՐԻ ՀԱՎԱՔԸ ՍՐԲՈՑ ՂԵՎՈՆԴՅԱՆՑ ԵՎ ՎԱՐԴԱՆԱՆՑ ՏՈՆԵՐԻ ԱՌԹԻՎ

Գեղեցիկ սովորություն է դարձել՝ ամեն տարի Մայր Աթոռի և ներքին թեմերի եկեղեցականների հավաքը ս. Էջմիածնում: Այս տարի ևս, մարտի 9-ին, երեքշաբթի օրը, Մայր Աթոռ ժամանեցին ներքին թեմերի սրբազան առաջնորդները, վարդապետներն ու քահանա հայրերը՝ հետևյալ կազմով.

Արարատյան թեմ՝

առաջնորդական փոխանորդ՝ տ. Կոմիտաս արքեպ. Տեր-Ստեփանյան.

Քահանա հայրեր՝

տ. Ռուբեն ավագ քհն. Մարտիրոսյան.
տ. Կարապետ քհն. Գրլրճյան.
տ. Սարգիս քհն. Թաշճյան.
տ. Ստեփան քհն. Տեր-Գևորգյան.
տ. Հարություն ավագ քհն. Մարկոսյան.
տ. Գաբրիել քհն. Հովհաննիսյան.
տ. Նշան քհն. Հանեյան.
տ. Ղևոնդ քհն. Սոմունջյան.
տ. Աբրահամ քհն. Մարգարյան.
տ. Գալուստ քհն. Բեքլիկյան.
տ. Վահան ավագ քհն. Տեր-Հովակիմյան.
տ. Հարություն քհն. Խեչումյան.
տ. Գրիգոր քհն. Ծատուրյան.
տ. Թադեոս քհն. Տերտերյան.
տ. Հակոբ քհն. Հակոբյան.
տ. Վարդան քհն. Քեշիշյան.
տ, Հակոբ քհն. Երանոսյան.
տ. Եղիշե քհն. Աբրահամյան.
տ. Մկրտիչ քհն. Տեր-Ստեփանյան.
տ. Կարապետ ավագ քհն. Հովնանյան.
տ. Խաչատուր քհն. Միհրաբյան.
տ. Ոսկան քհն. Շիրվանյան.
տ. Սամվել քհն. Համբարձյան.
տ. Հարություն ավագ քհն. Տերտերյան.
տ. Գրիգոր ավագ քհն. Չաֆթեյան.
տ. Սարգիս քհն. Չափարյան.
տ. Խաչիկ քհն. Կիրակոսյան.
տ. Բարդուղիմեոս քհն. Ղուկասյան.
տ. Բարսեղ քհն. Միրզախանյան.
տ. Թովմաս քհն. Տերտերյան:

Շիրակի թեմ՝

առաջնորդ՝ տ. Նարեկ եպս. Շաքարյան.

Քահանա հայրեր՝

տ. Վազգեն ավագ քհն. Ղարագյոզյան.
տ. Արամ ավագ քհն. Բոյաջյան.
տ. Նորայր ավագ քհն. Սարգսյան.
տ. Զավեն քհն. Մոսկովյան.
տ. Վահան քհն. Մարգարյան.
տ. Կարապետ քհն. Քելամյան.
Տ. Սուրեն քհն. Ծատուրյան:

Վրահայոց թեմ՝

առաջնորդ՝ տ. Գևորգ եպս. Սերայդարյան.

Քահանա հայրեր՝

տ. Համբարձում քհն. Մելքոնյան.
տ. Ժիրայր քհն. Կոնսուլյան.

տ. Հովհաննես ավագ քհն. Դանիելյան.
տ. Շմավոն քհն. Սաղոյան:

Ադրբեջանի թեմ՝
առաջնորդ՝ տ. Հուսիկ եպս. Սանթուրյան.

Քահանա հայրերից՝
տ. Ղուկաս քհն. Հակոբյան:

Ռուսաստանի և Հյուսիսային Կովկասի թեմից՝
առժամյա հոգևոր հովիվ Մոսկվայի հայոց՝ տ. Անանիա վրդ. Արաբաջյան.
տ. Բագրատ աբղ. Գալստյան.
տ. Վահան քհն. Սուրենյան.
տ. Գրիգոր քհն. Տերտերյան.
տ. Ղևոնդ քհն. Աղաճանյան:

Մայր Աթոռի միաբանությունից և Վաղարշապատի վանորեից՝
տ. Արսեն եպս. Բերբերյան.
տ. Մամբրե վրդ. Մարգարյան.
տ. Մասիս վրդ. Գալստյան.
տ. Տիրան աբղ. Կյուրեղյան.
տ. Թորգոմ աբղ. Մուշեղյան.
տ. Մոմիկ աբղ. Սարգսյան.
տ. Հովհաննես ավագ քհն. Մարուքյան.
տ. Հակոբ քհն. Հակոբյան.
տ. Նշան քհն. Բեյլերյան.
տ. Հովսեփ քհն. Հակոբյան.
տ. Գուրգեն քհն. Աշուրյան.
տ. Արտակ քհն. Սիմոնյան.
տ. Գրիգոր քհն. Փանոսյան.
տ. Առաքել քհն. Խաչատրյան.
տ. Վաղարշակ քհն. Բաղումյան.
տ. Միքայել քհն. Թեմուրյան.
Հակոբ սարկավագ Գրլընճյան.
Հակոբ սարկավագ Խաչատրյան:

Այս առթիվ Մայր Աթոռում կազմվել էր մի հանձնաժողով՝ կազմակերպված անցկացնելու համար սույն հավաքը: Հանձնաժողովի կազմում էին.
տ. Վահան եպս. Տերյան (նախագահ).
տ. Հուսիկ եպս. Սանթուրյան.
տ. Նարեկ եպս. Շաքարյան.
տ. Գևորգ եպս. Սերայդարյան.
տ. Հովհաննես ավագ քհն. Մարուքյան:

Մարտի 10-ին, չորեքշաբթի.—Մայր տաճարում հանդիսավորությամբ պաշտվում են Գիշերային, Առավոտյան և Արևագալի ժամերգությունները:

Ժամերգությանց ներկա է լինում Վեհափառ Հայրապետը:

Արևագալի ժամերգության սկզբին Արարատյան թեմից տ. Նշան քհն. Հանեյանը քարոզ է խոսում հետևյալ բնաբանով՝ «Ճանապարհ և ճշմարտութիւն և կեանք Քրիստոս»:

Ժամերգության ավարտին, լուսարարապետ տ. Հուսիկ եպիսկոպոսը Վեհափառ Հայրապետին է ներկայացնում հյուրերին և խնդրում Նրա օրհնությունը: Վեհափառ Հայրապետը բարի գալուստ է մաղթում հյուրերին, տալիս Իր օրհնությունը և հավաքի մասնակիցների աշխատանքին մաղթում հաջողություն:

Այնուհետև հոգևոր ճեմարանի հանդիսությունների դահլիճում տեղի է ունենում հավաքի պաշտոնական բացումը:

Տերունական աղոթքով սկսվում է նիստը: Բացման խոսքը կատարում է ս. Գեղարդ վանքի վանահայր **տ. Վահան եպս. Տերյանը**՝ շեշտելով Մայր Աթոռի և ներքին թեմերի հոգևորականների սույն հավաքի կարևորությունը: Այնուհետև ընտրվում են երկու քարտուղարներ՝ տ. Ռուբեն ավագ քհն. Մարտիրոսյանը և տ. Արամ ավագ քհն. Բոյաջյանը:

Մոսկվայի հայոց առժամյա հոգևոր հովիվ **տ. Անանիա վրդ. Արաբաջյանն** առաջինը դասախոսում է «Հայ եկեղեցու պատարագի ծագումն ու զարգացումը» թեմայի շուրջ: Դասախոսությունից հետո հայր սուրբը պատասխանում է ներկաների հարցերին:

Այնուհետև հանդես է գալիս հոգևոր ճեմարանի տեսուչ **տ. Հովհաննես ավագ քհն. Մարուքյանը**՝ հետևյալ թեմայի շուրջ զեկուցումով. «Հայ հոգևոր դպրոցների դերն այսօր»:

Օրվա երրորդ դասախոսությունը կարդում է հանձնաժողովի նախագահ **տ. Վահան եպս. Տերյանը**՝ «Միջնադարյան հայ հոգևոր դպրոցները» թեմայով:

Մարտի 11-ին, հինգշաբթի.—Ժամը 10.30-ին գումարվում է երկրորդ նիստը: Նախագահում է Շիրակի թեմի առաջնորդ **տ. Նարեկ եպս. Շաքարյանը:** Հրավիրվում է բանախոսելու ուխտավորաբար Մայր Աթոռ ժամանած Երուսաղեմի հայոց պատրիարքարանի դիվանապետ և Ժառանգավորաց վարժարանի տեսուչ **տ. Շահե արքեպ. Ասեմյանը**՝ «Հայ Երուսաղեմն այսօր» թեմայի շուրջ: Սրբազանը հանգամանորեն ներկայացնում է հայ Երուսաղեմի պատմությունը՝ սկզբից մինչև մեր օրերը, և մասնավորաբար կանգ առնում Երուսաղեմի սրբոց Հակոբյանց վանքի կատարած եկեղեցական, կրթական-մշակութային դերի և սրբատեղիների պահպանության նվիրական գործում Երուսաղեմի հայոց զինվորյալ միաբանության դժվարին և գնահատելի գործունեության վրա:

Ապա հանդես է գալիս տ. Ռուբեն ավագ քհն. Մարտիրոսյանը՝ «Հայ եկեղեցու ձայնը խաղաղության պայքարում» թեմայի մասին զեկուցումով: Տ. Վազգեն ավագ քհն. Ղարագյոզյանը խոսում է «Հայ քահանայի

դերը հայ հավատացյալի ընտանեկան կյանքում» թեմայով: Դրանով ավարտվում է հավաքի երկրորդ նիստը:

Հոգևոր ճեմարանի տեսուչ տ. Հովհաննես ավագ քհն. Մարուքյանն արտասանում է փակման խոսքը՝ հանրագումարի բերելով կատարված աշխատանքները: Լուսարարապետ տ. Հուսիկ եպիսկոպոսի «Պահպանիչ»-ով և միասնաբար «Հայր մեր»-ի երգեցողությամբ ավարտվում է հոգևորականաց հավաքի աշխատանքները:

Երեկոյան ժամը 18-ին Մայր տաճարում պաշտվում է հանգստյան ժամերգություն, որին ներկա է լինում Վեհափառ Հայրապետը:

Ժամերգության ավարտին ս. Հռիփսիմե վանքի ժամասաց տ. Հովսեփ քհն. Հակոբյանը քարոզում է հետևյալ բնաբանով. «Զի արմատ ամենայն չարեաց արծաթսիրութիւն է. որում ոմանց ցանկացեալ՝ վրիպեցան ի հաւատոցն, և զանձինս արկին ընդ բազում ցաւօք» (Ա Տիմ. Զ 10):

Այնուհետև Վեհափառ Հայրապետն առաջնորդվում է Վեհարան:

Ժամը 19-ին Նորին Սրբությունը բարեհաճում է ընդունել հավաքի մասնակից բարձրաստիճան հոգևորականներին, Մայր Աթոռի միաբանությանը և քահանա հայրերին: Հայոց Հայրապետը խոսում է մեր ժողովրդի կյանքում հայ հոգևորականության և մանավանդ քահանա հայրերին վստահված հոգևոր, եկեղեցաշեն ու հայրենանվեր ծառայության մասին և թելադրում լինել արժանի և բարի մշակներ իրենց հոգևոր խնամքին հանձնված հավատացյալների կյանքում՝ առաջնորդելու համար նրանց դեպի բարին, ազնիվն ու գեղեցիկը: Իր պատգամի ավարտին Վեհափառ Հայրապետը քահանա հայրերին է նվիրում վերջերս Մայր Աթոռում հրատարակված Նոր Կտակարանի արևելահայերեն նոր թարգմանության մեկական օրինակ՝ Ավետարանի լույսով ու քրիստոնեական հավատքով առաջնորդելու համար հավատավոր հայ ժողովրդի զավակներին:

Բոլոր ներկաներն աջահամբույրով ստանում են Վեհափառ Հայրապետի օրհնությունը և լավագույն տպավորություններով մեկնում Մայր Աթոռից:

ՀԱԿՈԲ ՍԱՐԿԱՎԱԳ ԳԼԼԸՆՃՅԱՆ